

իմոց, համաձայն որպէս այսմ՝ ընդհանուր, նմանապէս և առանձին սահմանադրութեան և համեմատ ժամանակէ առ ժամանակ յանուն նԱՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ յիմ՝ վերայ կարգադրեալ մեծաւորաց տուեալ պատուիրանացն՝ հրովարտակաց և հրամանացն, Իսկ վասն շահասիրութեան, մերձաւորութեան, բարեկամութեան կամ թշնամութեան չընթանալ ընդդէմ պարտաւորութեան իմոյ և երգմանս, և այնօրինակ վարել, որպէս վայելուչն է հաւատարիմ՝ հպատակի նԱՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, և որպէս զի կարացից ես տալ պատասխանի յայնմ առաջի Աստուծոյ և ահաւոր ատենի նորա, որ և ինքն տէր Աստուած օգնեցէ ինձ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, Ի վախճան այս իմ՝ երգման, համբուրեմ զբանս և զխաչ փրկչին իմոյ, Ամէն, Ի 18/ն Յուլիսի 1859 ամի:

Ըստ այսմ՝ երգմնագրոյ երգուայ (յիսկականին)

Մատթէոս Կաթուղիկոս ամենայն Հայոց:

Երգմնեցոյց՝ Պօղոս Լպիսկոպոս

Անդամք Սինօգի,

(Ստորագրութիւնք)

(Ստորագրութիւն Պրօկուրօրի)

Նորրնտիր Կաթուղիկոսը Յգոստոսի 15 ին ընդունումէ Ս. Օ. ծումն եւ սկսումէ վարել իւր հայրապետական իշխանութիւնը:

Յուսիկ Վարդապետ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՆՈՐԱ ԿՈՋՄԱՆԸ ՀԱՄԵՄԱՑ:

(Դասախօսութիւն Բուտօլթ Վերխովի, որ կարգացուած է Բերլինի գըթութեան քոյրերի վանքի լսարանումը):

Յարգոյապատիւ ունկնդիրներ,

Դասախօսութիւնները, որոնք այս ճառովս բաց են անում ընտանեկան ու ժողովրդական կրթութեան ժողովք կամ ակումբը, նպատակ ունին պատրաստել հասարակութեան համար բարեկամներ ու միջոցներ. — բարեկամներ, որպէս զի կրթութեան գործը, որից կախուած է ժողովրդի ապագան, ստանար այնպիսի մի զժուարալոյժ խնդրի կերպարանք՝ որի համար անխռնջ աշխատէին ճշմարիտ գիտունները, միջոցներ՝ որպէս զի մեր լայնածաւալ քաղաքումը, ինչտեղ կարիքները ու պի-

տղջքները այնպէս են աճում, որ համայնքի քանքն ու ճիգը բաւականութիւն չեն տալիս նոցա, հասարակութիւնը ունենար միջոցներ այդպիսի դիպուածներում օգնութեան ձեռք կարկառելու, այնպիսի դիպուածներում եմ ասում, երբ ընտանեաց ձգնութիւնը անզօր է լինում մարառելու դոցա դէմ, իսկ ուրիշ հասարակութիւններ էլ չեն կարողանում նպաստել. ուստի կամենում եմ ես, որ ստեղծուէին այնպիսի կարեւոր միջոցներ՝ որոնք բոլորովին ապահովէին ժողովրդի կրթութեան գործը:

Ներկայումս մեր տէրութեան մէջ կրթութիւնը հասարակաց հոգացողութեան առարկայ է դարձել: 113 յօդուածների թուում, որոնցից բաղկացած է մեր կանոնադրութիւնը, կան 6 յօդուածներ, որոնք բացառապէս վերաբերում են ուսման ու կրթութեան, թէպէտ 26-րդ յօդուածի խոստացած կանոնը նոցա թուին է պատկանում, որին արդէն տասն և հինգ տարի է սպասում ենք, սակայն օրէնքով ու տէրութեան կարգադրութիւններով վաղուց արդէն վճռուած է, որ Պրուսաց թագաւորութեան մէջ ոչ ոք չը մնայ առանց ուսման, Խզուր տեղը չէր, որ Պրուսիան երկար ժամանակ համարվում էր դպրոցական գործերի վերաբերմամբ օրինակելի տէրութիւն, և եթէ վերջին տարիներս ազատ Ընգլիան, նորանից յետոյ կոյսերական Ֆրանսիան գահական ճառից յետոյ, որ ասուեց այս տարի, սկսան առաւել և առաւել հետեւել պարտադիր դպրոցական ուսման, յայտնի բան է, աչքի առաջ ունէին Գերմանիայի, նա մանաւանդ Պրուսիայի տուած գեղեցիկ օրինակները: Միշտ և հանապազ Գերմանական ազգը կունենայ այս պատիւը, որ կրօնական յեղափոխութիւնից յետոյ նա անխոնջ աշխատել է ամբոխի կրթութեան համար: Եթէ կրթութեան մէջ եղել է յառաջադիմութեան մի քայլ, անշուշտ նա շաղկապուած է մի Գերմանացու անուան հետ և կարելի է ասել առանց մժղուկը ուղտ շինելու, թէ կրօնական յեղափոխութիւնը Գերմանիայում, անգամ և կաթօլիկ երկիրներում, կրթութեան ծաւալման այսպիսի նշանաւոր ծառայութիւն է մատուցել՝ որպիսին երբեմն քրիստոնէութիւնը — որի նշանակութիւնը նոյնպէս անցկացաւ անմիջապէս իւր գործունէութեան շրջանի սահմանից:

Ինչքան գեղեցիկ էլ լինէին սորա հետեանքները, դարձեալ բանը գեռ վերջացած չէ: Մենք պիտի թագուն չըպահենք և այս հանգամանքը, որ զարգացման շաւղի վրայ իւրաքանչիւր քայլը քարշում է իւր ետեւից իւր սեպհական վտանգը: Արթութիւնը պէտք է պատրաստէ կեանքի համար, իսկ այս նպատակին նա կարող է հասնել առաւել ուղիղ ու ճշմարիտ կերպով — միայն բարեկարգ ընտանեկան կեանքի միջոցով: Սակայն ժամանակիս տէրութեան վարչութիւնը, առաւել ևս ժամանակակից հասարակութիւնը միշտ և միշտ աշխատում է կրթութիւնը ընտանիքից հանել և դպրոցի մէջ մտցնել, իսկ վերջինս պատրաստում է տէրութեան ու հասարակութեան համար, քան

կեանքի, Արդարեւ, կեանքը նախ և առաջ պահանջում է, որ ամէն մի անհատ ինքնուրոյնաբար զարգանայ համեմատ իւր բնական ընդունակութիւններին ու հակումներին. բայց տէրութիւնն ու հասարակութիւնը պահանջում են ընդհակառակը, որ մասունքները զարգանան արհեստական կերպով զանազան աւանդութիւնների ու նպատակների համաձայն, որ յարակցութեամբ տէրութեան կամ հասարակութեան զարգացման մի որոշ աստիճանի հետ. Մտքի լուսաւորութիւնը այստեղ կատարվում է այնպէս, ինչպէս և հոգիների մշակութիւնը կալուածքներում, իւրաքանչիւր անհատի գինը ցածանում է մասսայի գնի համեմատ. Տէրութիւնը այլապէս չէր էլ կարող անել, քանի նա գործ ունի բազմութեան հետ:

Բացի ամբողջ կրթութիւնից, ժողովուրդը ունի պէս պէս խնդիրներ ու հարցեր տէրութեան վերաբերութեամբ. Ժողովուրդական կըրթութիւնը պէտք է ինկատի ունենայ և ուրիշ նպատակների, նա պիտի աշխատի օգնել ամէն մի անհատի և տայ նորան միջոց, որքան կարելի է.— եթէ միայն կարելի է—, որ նորա ընդունակութիւնները շուտ ու լաւ զարգանային. Ահա պատճառը, որից ժամանակակից խնդիրը ու հարցը բաղկացած է, և մենք պէտք է որոնենք լաւ միջոցներ անհատների ազատ զարգացման համար:

Այդպէս է և մեր հասարակութեան խնդիրը, և եթէ այսօր ես կամենում եմ մանրամասնօրէն քննել այս հարցը՝ իգական սեռի կըրթութիւնը նորա կոչման համեմատ, նորա համար է, որ շատ զգայի է դորա պակասութիւնը, և այս տեսակետից առանց զրական փոփոխութիւնների ու էական բարելաւութիւնների հէնց ընտանեկան կրթութիւնը, որի մասին առանձին հոգս ենք քաշում, երբէք չի ունենալ իւր ճշմարիտ նշանակութիւնը, երբէք էլ չի հասնիլ իւր նպատակին: Այսպէս, թողլ տուէք ուրեմն ինձ խօսել այս հարցի մասին՝ միայն երկուսը միասին շաղկապուած: Բայց չէ կարելի բարձի, թողի անել և երրորդը, այն է՝ ի՞նչ է կն ոջ բուն նշանակութիւնը կամ կոչումը:

Հին աշխարհի տէրութեանց մէջ, անգամ և այն տէրութեանց մէջ, որոնք միւսներից առաւել քաղաքակրթութեամբ էին, կրթութիւնը ընտանեկան գործերին էր վերաբերում, և եթէ այդ գործում խառնվում էր և տէրութեան վարչութիւնը, առաւել շուտով նա անում էր այդ ոչ որպէս տէրութիւն, այլ որպէս համայնք, Սպարտան, Աթէնքը, Հռոմը, ճշմարիտն ասած, մի մի մեծ համայնքներ էին, Civitas, այսինքն բոլոր քաղաքացիները միասին կազմում էին տէրութիւն, և այն, որին նոքա զիմում էին կրթութեան վերաբերութեամբ, և որքան այդ ձգտումները չէին վերաբերում զինուորական կրթութեան, հազիւ կարող է համեմատուել այս բանի հետ, ինչ որ արդեամբք կատարում է մի ուրիշ, մեր

քաղաքի նման, ժամանակակից մի մեծ համայնք, Սպարտան ցոյց տուեց թէ ինչ կարող է անել մի փակուած հասարակութիւն խիստ օրէնք-ների միջոցով, որոնց իրագործումը պահանջողական էր նա նոյնպէս ապացուցեց, որ մասսայի կրթութիւնը հասնելով մի յայտնի, առ միշտ որոշուած աստիճանի, արդարեւ, ունենում է իւր մէջ յառաջագիմութեան ամբողջական պայմանները միայն առ ժամանակ, այսինքն՝ բոլորը լինումէ որոշ ժամանակի համար, եւ երբ անցնումէ այդ յայտնի միջոցը, կրթութեան հետեանքը լինում է տղիտութիւն ու կոպտութիւն, որ նոյնպէս վնասակար է տէրութեան համար:

Մի ազգի քաղաքակրթութիւնն ու յառաջագիմութիւնը միայն այն ժամանակ կարող են լինել հաստատուն, երբ նոցա ապաւէնն ու յոյսը գտնվում է ընտանեաց մէջ, Այստեղ, ընտանիքում, ոչ միայն ժառանգաբար ցեղից ցեղ անցնում է բարոյականութիւնը, այլ և՛ գիտութիւն հասկանալը՝ գործնական տեսակետից, և կարողանալը՝ հարկաւոր դիպուածներում հասկացածը գործ դնել, այստեղ արմատանում է միմեանց ժառանգաբար աւանդելը, և յառաջագիմութիւնը ունենում է ամուր նեցուկ. այստեղ մանուկները զարգացնում են իւրեանց բնաւորութեանց այն կողմերը, որոնց մասին չէ կարող խնամք տածել ո՛չ տէրութիւնը, ո՛չ էլ համայնքը:

Թէ ինչ կարող է անել մի ընտանիքի անգամ թող ամենաանձուկը լինի նորա շրջանը, առանց տէրութեան ու համայնքի օժանդակութեան, այդ պարզ երևում է եւրոպացի հրէայ ազգի մէջ: Թափառական կեանքի ժամանակ նա անքակտելի պահեց իւր ընտանեկան հաստատութիւնը. հին շրէստանում, իւր ընտանիքը երբէք զոհ չէր անում թագաւորներին ու գաւաւորներին. և երբ հրէական թագաւորութիւնը կործանուեց, նա իւր հին սովորական ընտանեկան ձևով ողջ աշխարհս տարածուեց, Յիր ու ցան եղած զանազան ազգերի մէջ այսքան դարերի ընթացքում, անգամ ամենածանր ու անտանելի հանգամանքներում, մինչև օրս պահպանել են իւրեանց ինքնուրոյնութիւնը. իսկ եթէ մի քանիսները բարոյապէս փչացել են, ոչ մի անաչառ մարդ չի բաց ասել, որ հրէայ ընտանիքը, անգամ ամենավատ ժամանակներում, միշտ սեր է ցոյց տուել դէպի յառաջագիմութիւն և քաղաքակրթութիւն, և այժմ իսկ նա ոչինչ չէ խնայում, ճիգն է թափում թէ նիւթապէս և թէ բարոյապէս զարգանալու համար:

Մարդկութեան համար մեծ երջանկութիւն է, որ քրիստոնէութիւնը սկիզբն առաւ այդ ազգի մէջ և հանեց այդ փոքրիկ ու սահմանափակ, առանձնացած ժողովրդի միջից սերտ կապուած ընտանեկան կեանքի սերմերը և ցանեց ընդհանուր մարդկային ցեղի մէջ, Յունական աշխարհը, թէպէտ և շատ լուսաւորուած էր, բայց գիտութեան ասպարիզի մէջ չունէր հաստատ նեցուկ մշտնջենաւոր յառաջխաղացութեան համար. նեցուկ, որ կարող է տալ միայն ընտանիքը, ուր մեծ դեր է խաղում,

մեծ իշխանութիւն ունի տան տիկինը։ Առանց կնոջ կամ մօր՝ ընտանիքը նշանակութիւն չունի։ Եայտնի բան է, թէպէտ հայրն է տան գլուխը, բայց մայրը պէտք է լինի, այսպէս ասած, նոյն ընտանիքի կենդրոնը։ Եւ տան իսկ ներկայացուցիչը մայրն է, որին պէտք է դիմեն բոլորեքեան, նոյնպէս և հայրը, երբ նա թողնում է իւր պաշտօնը ու պարապմունքը։ Միմիայն մօր ներկայութիւնը զգալ է տալիս, որ մարդ իւր տանն է գտնվում։ Այդ պատճառով նա պէտք է լինի հօր միակ կինը, ոչ թէ մէկը ի միջի այլոց։ Գորա համար էլ նա պէտք է լինի ազատ և ոչ ստրուկ, գորա համար էլ պէտք է թողնել, որ նա ունենալ լիովին իրաւունք ժողովրդի կրթութեան ու լուսաւորութեան գործի մէջ միջամտելու, և պէտք չէ նորան զրկել ընդհանուր զարգացմունքից, վերջապէս գորա համար էլ նա պէտք է զարգանայ կանացի բնաւորութեան համեմատ, և ոչ այնպէս, ինչպէս տղամարդիկն են կրթվում, որ (տղամարդկանց կրթութիւնը) շատ անգամ տալիս են կանանց։

Սակայն այս չհասկացաւ յունական աշխարհը գոնէ իւր ողջ կադմակերպութեամբը։ Հռովմէական լուսաւորութիւնը ահագին քայլ առնեց դէպի յառաջ, հռովմը առաջին անգամ ցոյց տուեց աշխարհին այնպիսի օրինակ, որպիսին չկարողացաւ ոչ Յունաստանը, ոչ էլ Արեւելքը, անգամ և հին Հրէաստանը — մեծարանք դէպի ողջախոհ կանայք, դէպի մօր կոչման բոլոր բարոյական դժը։ Բայց հռովմայեցի մատրոնան չուներ ոչինչ քաղաքական իրաւունքներ և չըհասաւ բնութեան համեմատ ազատ զարգացման, որովհետեւ հռովմէական կեանքը հակուած էր առաւել դէպի արտաքին փայլը, քան ներքինը։ Ընտանիքը այնքան նշանակութիւն ուներ, որքան նա օգուտ էր բերում հասարակութեան կամ, եթէ կամենում էք, տէրութեան համար, իսկ երբ նա ցոյց տուեց ինքնուրոյնութեան ձգտումներ, երբ մտաւոր լուսաւորութիւնը եղաւ ամէն մի անհատի կրթութեան նպատակը, այն ժամանակ, ինչպէս այդ գուշակեց խոտարարոյ, բայց առաքինի Պատոնը, սկսաւ հռովմէական տէրութեան անկումը։

Քրիստոնէութիւնը այդ անկման ժամանակ գործում էր, որպէս մի լուսաւորիչ տարր (էլէմէնտ), Տիրելով ընտանիքներին, և ստեղծելով նոցանից պէսպէս հաստատութիւններ համայն տէրութեան մէջ՝ որ գեռ ևս կանգուն էր, նա նպաստեց հին աշխարհի անկմանը։ Այդ նոր էլէմէնտի տարածողները գերմանական ազգերից եղան։ Նոքա հանգէս եկան իւրեանց բարեկարգ ցեղական համայնքի կարգովը, ուր ընտանիքը ազդի ապագայ յեղափոխութիւնների ամենամօլը հիմն էր։

Հազիւ նոքա իւրեանց համար բնակութեան տեղ բռնեցին, իսկոյն և եթ ընտանիքը եղաւ համայնքի և տէրութեան գլխաւոր էլէմէնտը իսկ ընտանիքում մարդու, համա հաւասար իրաւունք ունեցող տիկինը գտնում է արդէն տիրուհի։

Այժմ անանդի է քննել և այն հանգամանքները թէ ընտանիքը, թէ պէտ և նորա վրայ է հիմնուած համայնքի սերտ մտերմութեամբ շաղկապուիլը, իւր ինքնուրոյնութեան ժամանակ որչափ արգելքներ է յառաջ բերում տէրութեան նպատակների համար, որոնց մինչև օրս չեն կարողանում յաղթել, Յիշենք այստեղ, որ առաջ քրիստոնէութիւնը միջոց էր հոռովմէական ու գերմանական ցեղերը միաւորելու, որովհետեւ քրիստոնէական յատկութիւններից նա կսգմեց քրիստոնեայ հասարակութիւն, իսկ յետոյ՝ հետ զհետեւ և քրիստոնեայ տէրութիւն, Այս քրիստոնեայ տէրութիւնը Հոռովմէական կայսրութիւնն էր, և երբ գերմանական ազգը համոզուեց որ իւր տէրութեան մէջ թափանցել է ոչ թէ իւր սեպհական, այլ օտարի կեանքը, այն է՝ հոռովմէականը, որ նա արմատացած է եւ համայնքի, եւ հասարակութեան, եւ ընտանիքների մէջ, այն ժամանակ նա փակեց, կտրեց միմեանց ետեւից նորա հետ ունեցած յարակցութիւնները, և այս քակտման հետեանքն էր նոյն իսկ Հոռովմէական կայսրութեան անկումը:

Գերմանական ազգը մինչև օրս ճիգն է թափում միաւորելու, միաւորելու միայն բուն գերմանական կայսրութիւնը, Խնչ և իցէ, կրկին Գերմանացի ընտանիքը փրկուած է, և ինչպէս յաջողուեց նորան կազմել հասարակութիւն, նոյնպէս էլ նա դոյն շաւղով կրգնայ, եթէ միայն չըջեղուի և չըծոռուի, և եթէ աչքի առաջ ունենայ ապագայ սերնդի դաստիարակութեան և կրթութեան վերաբերմամբ ամենազիսաւոր հարկը: Առանց վիճաբանութեան կարելի է ասել, որ նա նորից չի ստեղծիլ նոր քրիստոնէական տէրութիւն կամ թագաւորութիւն, բայց կազատէ, կրփրկէ փրիստոնէական սկզբունքները, որի վերայ հիմնուած է լուսաւորութեան վարդապետութիւնը, կրփրկէ ճշմարիտ մարգկա յիւն բնութիւնը, որ չէ մերժում նաև հրեայ ընտանիքը, որ և հետզհետեւ պիտի թափանցէ մեր արքունական հիմնարկութիւնների մէջ:

Ապագայ սերնդի կրթութիւնը երբէք այնքան չէ կախուած ուսումնարանից — գտնվում է նա տէրութեան կամ հասարակութեան հսկողութեան ներքոյ թէ ոչ, — այդ մի և նոյն է — ինչպէս կարծում են մի քանի խելօք — խորագէտներ, Յայտնի բան է, դա մեծ բաղդաւորութիւն է մարդկութեան համար, Զանազան անձնաւորութեան կողմից առաջարկուած լուսաւորութեան միջոցները եթէ արգարե վճռել են անցեալ սերնդի բախտը, որ և պէտք է հնազանդէր այդ միջոցներին՝ միասակար և վատ դրութեան մէջ կրլինէին այժմեան գործերը: Արգարե որքան միջոցների, հեշտութիւնների որ հնարել էին ուսումնարանների համար այսքան դարերի ընթացքում, և որքան յայտնի եղան, այդ միջոցները վերջի վերջոյ անպէտք և անյարմար դուրս եկան: Սովորեցնել դեռ չէ նշանակում կրթել, և եթէ ժամանակով, թէպէտ և շատ կասկածելի է, գործը այնքան յառաջ գնար, որ մեր ու-

սուցիչները կարողանային մի և նոյն ժամանակ մեր դաստիարակները լինել, կրկին ապագայ սերունդը կ'ենթարկուէր նոցա ազդեցութեանը միայն մինչև մի որոշ աստիճան. և ազգի ընդհանուր վիճակը, թէպէտ և քիչ, այնքան էլ կ'ախուած կ'ըլլինէր ընտանեկան բարեկարգմար ու բարեկարգ ազդեցութիւնից, որքան և ուսումնարանի:

Ընտանեկան ազդեցութիւնը ամենաառաջինն է, որին ենթարկւում է մանուկը, ուստի և այդ ազդեցութիւնը երկար ժամանակ մնում է նորա բնաւորութեան մէջ: Անգամ եթէ հիմը դրւում է առանց որոշ, պարզ և հասկանալի նպատակի, եթէ այդ ազդեցութիւնը, բառիս բուն ու խիստ նշանակութեամբ չէ լինում՝ դրական, պատշաճօրէն, նա միշտ ու հանապաղ մնում է, և մենք ըզգում ենք այդ, Ինքն ըստ ինքեան հասկանալի է, եթէ նա եղած չէ գիտակցական և դրական, կարող է յայտնուիլ նորա և թոյլ կողմերը, ևս չեմ կամենում ասել, որ ծնողաց ազդեցութիւնը պէտք է լինի բոլորովին որոշ ուղղութեամբ և խիստ հսկողութեամբ: Այն այնպիսի ծնողներ, որոնք լիովին հակառակ կ'արծիք ունին դաստիարակութեան մասին. կան և այնպիսիները, որոնք բարոյապէս այնքան փչացուած են, որ առաջուց, անգամ և գիտակցաբար, ցանում են որդւոց անմեղ սրտերում չար որումներ: Եւ համոզուած կ'արող եմ՝ ասել, որ այդպիսի վատ ծնողները կազմում են բացառութիւն ընդհանուր կանոնից: Սիրոյ բնական կապերը, որոնք միաւորում են արիւնակից բարեկամներին, այնպիսի դժուարութեամբ է աղխախփում, որ համարեա հասարակութեան ամենավատ ու աննշան մասն ոչ միայն կապում չէ, այլ հակառակ է նոցա միանալուն: Նիւթիս նկատմամբ, որի մասին խօսում ենք, այդպիսի մարդկանց միշտ մենք հաշուում ենք, իբրու թէ չըկան:

Չենք կարող բարձի թողի անել նոյնպէս և այն հանգամանքը, որ շատ ու շատ ընտանիք երաշխաւոր չեն լինում իւրեանց որդւոց բարւոք կրթութեան համար: Մեր հասարակութեան ներկայ պարագաներում, հօր ազդեցութիւնը նշմարելի կերպով նուազում է իւր նախնի ազդեցութիւնից, երբ իւր հօր արհեստը, փեշակը, կոչումը որոշում էր և որդու արհեստը, փեշակը և կոչումը: Հասարակական կեանքը, որ օրէ ցօր առաւել ազատութիւն է ստանում և անգամ իրաւունք է տալիս ռամկի որդուն ընտրել իւր ապագայ կոչումը, այսինքն՝ ինչ դասի է կամենում՝ պատկանել, նուազեցնում, թուլացնում է հոգեբանական ամենահասարակ պատճառներով հօր ազդեցութիւնը, իսկ միւս կողմից գործերն ու աշխատանքը առաւել շատանում են, որոնց համար պէտք են օգնականներ: Վիող վաստակելու պէս պէս միջոցները առաւել դժուարանում են, և հայրը՝ ընկնելով դոցա ետեւից օրուան հացը ճարելու համար ժամանակ չէ ունենում գործնականապէս պարապել որդւոց կրթութեամբ:

Այսպէս ուրեմն, հետեաքար, զօրանում, մեծանում է մօր ազդե-

ցութիւնը, որ ինքը բնութիւնն նուիրել է մօրը — տան տիկն ոջը՝ Արդարեւ, անբնական չի լինիլ, եթէ մայրը, որ եղել է երեխային առաջին ծննդաբեր, որ եղել է նորա մանկական խաղերի ընկերակիցը, որ զրազեցնում է նորան իւր երեակայութեան պատկերներովը և հասկացողութիւններովը, որոնցով նա եղել է նորա մանկական կեանքի ու գործերի ամենամերձաւորը, որ այդ մարդը յետոյ կարող կլինի գտնել դէպի սիրտը տանող շաւիղը, որով լիովին կը կարողանայ գրաւել մանկան։ Միթէ՞ բնական չէ, որ մայրը առաւել շատ ապրելով ու բնակելով երեխայի հետ, առաւել լաւ, առաւել ճիշդ, գուցէ և անգիտակցաբար, իմանում է երեխայի բնաւորութիւնը, նորա մարմնաւոր ու մտաւոր առանձին յատկութիւնները, քան թէ հայրը, որ, գուցէ մօրիցն էլ հմուտ ու տեղեակ է, բայց նորա տպաւորութիւնն այնքան հաստատ չէ, և դատողութիւնները առաւել հիմնուած են փորձերի ու կանոնների կամ յանկարծակի գտնուած մի ֆակտի քան թէ երկարատե դիտողութիւնների ու ղննողութիւնների վերայ։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ կարող է լինել և սորա հակառակը՝ Բայց ո՞ւմ յայտնի չէ, որ մայրերը մեծ ազդեցութիւն ունին որպէս երեւելի ու նշանաւոր, նոյնպէս և աննշան մարդկանց վերայ, Օրինակներ և ապացոյցներ բերելու հարկաւորութիւն չըկայ, որովհետեւ մեղանից իւրաքանչիւրը բաւականին շատ օրինակներ գիտէ։ Գլխաւոր բանը նորանումն է, որ ապացուցանենք թէ ֆակտ է, որ մայրերը առաջին ու ամենաազդեող դաստիարակիչներն են և հետեւաբար չենք սխալուիլ, եթէ եզրակացութիւն անենք, թէ որպէս տէրութիւնը, նոյնպէս և հասարակութիւնը անհամեմատ օգուտներ կըստանային, եթէ մայրերը մի և նոյն ժամանակ և ամենալաւ դաստիարակիչները լինէին։ Եթէ չէ կարելի բացասել այն հանգամանքը, որ նոքա դաստիարակում են այն կողմերը, որ երկար ժամանակ երբեմն, անգամ ողջ կեանքը, ներգործում են երեխայի որպէս մարմնական, այնպէս և մտաւոր առողջութեան վերայ, նոյնպէս և չէ կարելի ճիգն չթափել այն նպատակով՝ որպէս զի տանք նոցա յարմար միջոցներ առաւել ևս լաւ կատարելու այդ սուրբ պարտքը։

(Երբեք)

Ռէթէ.